II
52

II
52

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

891.99

ԴԵՊԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ

ՊԻԵՍ ՎԵՅ ՊԱՏԿԵՐՈՎ

ԻՆՎԵՆՏԱՐ № 5647

Փոխադրության ռուսերենից

Архивное Управление
при СНК Арм.ССР
НАУЧНО-ПРАКТИЧЕСКАЯ
БИБЛИОТЕКА

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ «ՄԱՐՏԱԿՈՉ»
ԹԻՖԼԻՍ № 5 1924

11-52ահ

Ժ. Տ. Գ. Խ. Գոլիգր. Բաժ. 4-րդ տպարան, Գուշկ. 3.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՔՆԵՐ

Սոնա—յերիտասարդ գեղջկուհի, պատգամավորուհի։
Ոհան—Սոնայի ամուսինը։
Ոհանի հայրը։
Մայրը։
Մարիամ—Սոնայի ընկերուհին, պատգամավորուհի։
Կինբաժնի վարիչը։
Կինբաժնի հրահանգիչը։
Գյուղ. գործ. կոմիտ. նախագահը։
Պետրոս—կոմբինատի բարուզարը։
Գավ. գործկոմի նախագահը։
Վարդան—բանֆակի ուսանող, Պետրոսի ընկերը։

Բանվորուհիներ, գեղջկուհիներ, գյուղացիներ, պառավներ, յերեխաներ, քաղաքացիք, միլիցիոներներ։

ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

Բեմը ներկայացնում է գյուղական սենյակ։ Ոնանի մայրը մահում, հայրը ծխում, Սոնան կարում է։ Կեսոր է։

ՏԵՍԻԼ Ա.

(Դուռը աղմուկով բացվում է, ներս է վազում Մարիամը)։

ՄԱՐԻԱՄ — Դեհ, Սոնա, շուտ, գործդ թող, գնանք։ Կինոթատրոնի հրահանգիչը յեկել է, ժողովի յե կանչում, մարտի 8-ի հանդիսավոր նիստի համար պատգամավորներ պիտի ընտրենք ու քաղաք ուղարկենք։

ՄԱՅՐԸ — Աղջի բան ու գործ չունեք յերևի, վոր ժողովներն եք քաշ գալի. եա ով է իմացել, վոր հարանները, են ել լի որերը, ժողով գնան. քիչ գործ կա շինելու. ամոթ է, նստեք տանը։

ՄԱՐԻԱՄ — Ի՞նչ ես չարանում, մորքուր. մենք խոմ անտեղի չենք ման գալի. չասացի, վոր պատգամավոր պիտի ընտրենք ու քաղաք ուղարկենք մարտի 8-ի մեր տոնին։

ՄԱՅՐԸ — Մարտի 8-ին, եա ինչ տոն է։ Ա՛յ մարդ, եա ինչ սրբի որ է ամսի ութը, միտս չի գալի։

ՄԱՐԻԱՄ *(ծիծաղելով)* — Չե՛, մորքուր ջան, եա սուրբի տոն չի, եա մեր կանանց տոնն է։

ՄԱՅՐԸ — Աղջի Մարիամ, եա ինչ ասիր, վոյ քոռանամ յես։ Ա՛յ մարդ, իմացար ինչ ասաց։ Սուրբ աստված, դու գիտես, խղճա մեզ բոլորիս։ *(Խաչակնքում է յերեսը)*։ Ա՛յ քեզ անորինություն. սուրբերի տոնը չեն կատարում,

կնանիքի տոն են մոգոնել։ Վայ, վայ, վայ, աշխարհի վերջն է հասել ելի։ Հո զուր չես ասում, այ մարդ, թե խալիքը շատ յերես է առել, վոչ աստված գիտեն, վոչ ել ժամ ու աղոթք։ Աղոթելու վախտին սատանաներին կուրախացնեն։ Ո՞վ եր իմացել կնիկների տոն. ով դու, մայր աստվածածին, խղճա մեզ մեղավորներիս։ (Խաչակնքում է)։

ՀԱՅՐ—Ե՛, կնիկ, ինչ ասեմ. այ քեզ ազատություն, տես, թե ինչ ավեց մեզ էտ անտերը. ծերերին մի պատվի, աստծուն վոտի տակ դցի, այ քեզ ազատություն։ Ենք երեկվա լակոտն ել մեզ բան է սովորեցնում. «զուք իսկի բան չեք հասկանում, աստված չկա, էտ բոլորը սուտմուտ, հնարովի բաներ են»... Մեղա՛ քեզ, աստված, ես ինչ որերի հասանք։ Դրուստ վոր աշխարքի վերջը հասել է. փուչ լինի եսպիսի աշխարհը։ (Մարիամը յեվ Սոնան կամաց խոսում են)։

ՍՈՆԱ (կարը ծալելով)—Մարիամ, յես պրծա։ Դրնանք, թե չե կուշանանք։

ՄԱՅՐԸ—Ախչի Սոնա, տես, Ոհանի ձեռից չես պրծնի, մեկ թող տուն գա։ Լավ հարս ես, հա՛, սաղ գործերը թողած, անից ուր ես փախչում։ Մարդու յերեսին ել ամաչում եմ վոր նայեմ։ Են որ կատյան եր ասում, թե հարսդ ինչ վոր շատ...

ՍՈՆԱ—Հերիք է, մայրիկ։ Ձեր էտ խոսքերը մինչև եսաեղոտ են հասել. են ես ասեց, ես են ասեց։ Մեռանք էտ բամբասանքներից. թող ենքան ասեն, վոր իրենք ել բեզարեն։ Դու հոմ գիտես, վոր յես փիս բան չեմ անում։ Ի՞նչ է իմ արածը. ուզում եմ սովորեմ, ուզում եմ ամեն բան իմանամ, ինչ վոր աշխարհում կա։ Եսաեղ ինչ փիս բան կա վոր։

ՀԱՅՐ—Իմացա՛ր, կնիկ, ուզում է ուսումնական դառնա, հա՛, հա՛, հա՛... Ուսումը կնկա գործ է։ Հո սուտ չեն ասում, թե կնկա մազը յերկար է, խելքը կարճ։ Ավելի լավ է տանը նստի, տուն-տեղը մաքրի, մարդուդ խոսքը

գետին մի գցի ու ամեն տեղ ել քիթդ մի կոխի։ Ա՛յ թե ինչ, ուսումնական հարս ել ունեցանք, հա՛, հա՛, հա՛...

ՄԱՐԻԱՄ—Եհ, հայրիկ, ներողություն կանես, էտ ժամանակներն անցան, վոր կնիկը ձենը կտրած տանը պիտի նստեր։ Խորհրդային իշխանությունը մեզ ել ազամարդկանց հավասար իրավունքներ է տվել, իսկ դուք ուզում եք ելի մեզ ոտքատակ ու խավար պահեք։ Չե, հայրիկ ջան, էտ ժամանակները գնացին, անցան։ Մենք հիմի գիտենք, թե ինչ իրավունքներ ունենք և թե ինչպես պիտի ապրենք։

ՍՈՆԱ—Ու էտ իրավունքներից մենք ել ձեռք չենք քաշի. իսկ թե ուզենաք ուժով տանը պահեք, են ժամանակ Սովետական կառավարությունը մեզ կըպաշտպանի, չէ՞ վոր նա մեր հարազատ մայրն է։ Դեհ, Մարիամ, գընանք, շատ ուշացանք։

ՀԱՅՐ—Այ գետին մտածներ, մի վոտի տակ դցեն ձեզ ու լավ խրատեն, վոր էտ հիմարությունները գլուխներից դուս գա։ Մի տեսեք հլա, վոնց են կչկչում աներեսները։

ՍՈՆԱ—Հայրիկ, ձեռներդ կարճ են, չես կարող մեզ բան անես։ (Բարձր ծիծաղելով Մարիամի հետ դուս են գնում։)

ՄԱՅՐ—Ամենաբարի աստված, յերկնային թագավոր, մեռնեմ անունիդ։ (Խաչակնքում և յերեսը։) Ես հարսի շնորհք է։ Մեծերին եդպես կը պատասխանեն։ Մեկ սպասի, Ոհանը գա, էտ հա-հա, հի-հին քթիցդ հանի, անամոթ։

ՀԱՅՐԸ—Անիծվեք դուք, անիծվեք, կասես թոկից փախածներ լինեն։ Ազատություն, ազատություն. ը՞հ, գրողը տանի ձեզ ել, ձեր ազատությունն ել։

ՏԵՍԻԼ Բ.

ՆՐԱՆՔ ՅԵՎ ՈՀԱՆ

ՈՀԱՆ (ներս մտնելով)—Սոնան ուր է։

ՀԱՅՐ—Կնկադ շատ ես բաց թողել, վորդի։ Տես վոնց է յերես առել։ Վոչ հորդ է բանի տեղ դնում, վոչ էլ մորը. սի խոսքին տան է պատասխանում. ուզում ես են փուչ կենդանուն մի բան սովորեցնես, դեմդ կանգնում, հա-հա, հի-հի ծիծաղում։ Բա ես որենք է, վորդի։

ՈՀԱՆ—Մեկ ասեք, եղ ուր է գնացել, է։

ՄԱՅՐ—Վորդի ջան, ես ինչ անբախտ կնիկ եմ յես։ Ինչու աստված ինձ եսպես պատժեց։ Իմ հատակին վայել է են թուքն ու մուրը, վոր քո կնիկն իմ գլխին բերում է։ Աստված ջան, վոր մեղքիս համար ինձ եսպես պատժեցիր։ Տանը հանգիստ չունենք եղ անաստվածից, տանից դուրս գալ էլ չեմ կարողանում, ամաչում եմ։ (Լաց է լինում)։

ՈՀԱՆ—Դե ասեք տեսնեմ, ինչ է պատահել։ Ո՞ւր է գնացել Սոնան։

ՀԱՅՐ—Վորդի, Ոհան, կնկադ շատ ես բաց թողել։ Ո՞վ է իմացել, վոր հարսը ժողով գնա։ Քիչ առաջ Գասպարենց Մարիամը յեկավ. ենքան լեզու թափեց, վերջը մեր գեղին մատնին էլ հետը տարավ։ Ասում եր—մենք հիմի իրավունք ունենք ուր ուզում ենք՝ գնանք ու գանք. ասում եր—թե չեք թողնի, գանգատ կանենք ու ձեր գլխին կը տեսնեք թե ինչ կը բերենք։

ՈՀԱՆ—Ապա մի տուն գա, յես նրան իրավունք ցույց կը տամ։ Եա ինչ կարգ ու կանոն է. նա իմ կնիկն է, թե չե։ Մի տեսեք, է, դեռ բերանն էլ բաց է անում, հա։ Մոռացավ, թե աղջիկ ժամանակը ինչպես եր սոված զկուտում։ Հիմի փորը կուշտ, տեղը տաք, հագած-կապած, էլ ինչն է պակաս։ Յես քեզ ցույց կը տամ, հա։ Կաշին կը

քերթեմ անիծվածի, վոսկորները կը չարդեմ։ (Դուրս է գնում)։

ՄԱՅՐԸ—Ապրես, վորդի, ապրես։ Եապես մի լավ խրատի եա անամոթին։

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ՊԱՏԿԵՐ ՅԵՐԿՐՈՐԴ

Բեմը ներկայացնում է գյուղի բակը, մեջտեղը մի սեղան, վորի շուրջը նստած են՝ Մարիամը—նախագահ, գործկոմի նախագահը, Պետրոսը։ Սեղանի մոտ կանգնած է կինբաժնի հրահանգիչը։ Սեղանի յերկու կողմը կանգնած են կանայք, նրանց յետևից յերևում են գյուղացիներ, պառավներ և յերեխաներ։

ՀՐԱՀԱՆԳԻՉ — Ընկերներ, հիմա բոլորդ հասկացաք, թե մենք ինչու ենք տոնում մարտի 8-ը, ինչու համար է այդ տոնը և ուրիշ յերկրներում էլ ինչպես են տոնում այդ որը։ Այս տարի յել մարտի 8-ին կանայք դուրս կը գան կարմիր դրոշակներով և բոլորը կը տեսնեն, վոր մենք շատ-շատ ենք, վոր մենք մի մեծ ույժ ենք. դե՛հ, ընկերներ, ունեմ կեցցե՛ մարտի 8-ը, վորը կանչում է մեզ դեպի նոր կյանք։ Կեցցե՛ մեր բոլորիս պաշտպան Խորհրդային իշխանությունը։ (Կանայք ծափահարում են։)

ՄԱՐԻԱՄ—Ընկերը բացատրեց, թե մարտի 8-ը ինչ տոն է։ Ի հարկե, մենք բոլորս էլ ուզում ենք ընկերոջ ասած նոր կյանքը։ Հիմի յեկեք մեզանից յերկուսին ընտրենք, վոր քաղաք գնան, ամեն բան լավ տեսնեն ենտեղ, հետո գան ու տեսածները մեզ պատմեն։ Դե՛հ, ասեք, ո՞ւմ ուղարկենք։

ՀՐԱՀԱՆԳԻՉ—Ընկերներ, յես ուզում եմ ձեզ մի խորհուրդ տալ։ Արդեն ասացի, վոր մեր տոնին հրավիրում ենք նրանց, վորոնք ամբողջ հոգով մեզ հետ են ու էլ չեն ուզում առաջվա պես խավարում ապրել։ Մենք նրանց պետք է սովորեցնենք աշխատել, սովորեցնենք, թե ինչպես պետք է սկսել նոր ձևով ապրել. նոր կյանք ցանկանալը միայն քիչ է, պետք է և գիտենալ, թե ինչպես կառուցանել այդ կյանքը։ Ձեր պատգամավորները քաղաքում շատ ու շատ նոր բաներ կը տեսնեն ու կիմանան. կը տեսնեն, թե ինչպես բանվորական կառավարությունը ոգնում է բոլոր աշխատավոր կանանց։ Ուրեմն, ընկերներ, ընտրեցեք նրանց, վորոնք հետո կը կարողանան ձեզ համար աշխատել։

ՄԱՐԻԱՄ—Դե ասեք, ո՞ւմ եք ուզում։ (Ձայներ՝ «Մարիամին», «Սոնային», «Գոհարին», «Սաթենիկին» յեվ այլն)։

ՄԱՐԻԱՄ—Մեկ-մեկ ասեք, բան չի հասկացվում։

(Բոլորը կանչում են. «Մարիամին», «Մարիամին ենք ուզում» (ընդհանրացնում են ձեռները)։

I ԳԵՂՋԿՈՒՀԻ—Մարիամը միշտ մեր կողմն է, նա մեզ համար կաշխատի։

ՄԱՐԻԱՄ—Հարկավոր չէ գոռալ։ Մեկը Մարիամը, էլ ո՞ւմ եք ուզում։

II ԳԵՂՋ.—Թող Կատարը գնա։

ՁԱՅՆԵՐ—Չէ, չէ, չի կարող, նա շատ ամաչկոտ է։

ՄԱՐԻԱՄ—Դե՛հ, էլ ո՞ւմ եք ուզում, ասեք։

ԳՅՈՒՂ. ՆԱԽԱԳ—Յես կարծում եմ, վոր լավ կը լիներ Սոնային ուղարկեյինք. նա շատ ե՛հետաքրքրվում նոր կյանքով. շուտ-շուտ ինձանից հարցնում է թե՝ քաղաքում ինչ կա, ինչ չկա, ենտեղի կնանիքը ինչպես են ապրում։ Համարձակ էլ է, չի ամաչի։ Թող Սոնան գնա, համ աշխարհ կը տեսնի, համ էլ բան կը սովորի։

ՄԱՐԻԱՄ—Համաձայն եք, վոր Սոնան ու Մարիամը գնան։ (Բոլորը ընդհանրացնում են ձեռները։ Սոնան մոտենում է Մարիամին ու փսփսում նրա ականջին. Մարիամը բացասական նշան է անում)։

ԿԱՆԱՆՑԻՑ ՄԵԿԸ (վոր լսել էր այդ խոսակցությունը)—Ա՛յ քեզ բան. տեսեք Սոնան ինչ է ասում՝

«Տանը չեն թողնի»։ Մի վախի, ընտրել, պրծել ենք, վոչ վոք իրավունք չունի չթողնի։

(Աղմուկ. ձայներ՝ «Ո՞վ չի թողնի», «Ցույց կը տանք վոնց չեն թողնի», «Չեն թողնում, վոր մարդ աշխարհ էլ տեսնի»)։

ՄԱՐԻԱՄ—Հանգստացեք, ընկերներ, միք աղմկի։ Ուրեմն՝ յես ու Սոնան կը գնանք։

ՈՀԱՆ (վորը յերկար ժամանակ լսում կը, Մարիամի խոսքերից հետո մոտենում է սեղանին)—Չեմ թողնի, Սոնան վոչ մի տեղ չի գնա։

(Ընդհանուր աղմուկ. կանայք իրար են անցնում. զյուղացիք ու պառավներն առաջ են գալիս ու քաջալերում Ոհանին. յերեխաները ըղավում են. նախագահը, Մարիամը ամեն կերպ աշխատում են հանգստացնել, բայց չի աջողվում. հրահանգիչը յեվ կոմբնձիի քարտուղարն աշխատում են համոզել Ոհանին)։

ԿԱՆԱՆՑԻՑ ՄԵԿԸ (մոտենում է սեղանին յեվ քարձր կանչում)—Ես ինչ բան է։ Հիմի էլ հո Նիկոլայի վախը չի, վոր մեզ միշտ տանը պահեն։ Սոնան ընտրվել է ու պիտի գնա, պրծավ գնաց։ (Դարձյալ աղմուկ. «Ճիշտ է ասում, Սոնան պիտի գնա, էլ վոչ մի խոսք»։

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ (Ոհանին)—«Այ տղա, մի լավ խրատի կնոջդ»։ «Թոկը քաշի, է»։ «Տես հլա, ջահել հարսը մեն-մենակ քաղաք պիտի գնա»։ «Անամոթ, մարդդ չի ուզում, տեղդ նստիր»։

ՀՐԱՀԱՆԳԻՉԸ (սկսում է քարձր խոսել. աղմուկը հետզհետե դադարում է)—Ընկերներ, հանգստացեք, սա շատ կարևոր հարց է. յեկեք հանգիստ խոսենք։ Ապա Ոհանին հարցնենք, ինչու Սոնային չի թողնում, կարելի՞ յե Ոհանը չգիտե, թե ինչու համար ենք նրա կնոջը քաղաք ուղարկում։

ՆԱԽԱԳԱՀ—Ապա, Ոհան, մի սաա տեսնենք։ (Ոհանը լուռ քաշում է Սոնային. կինը չի գնում յեվ ազատվելով

մոտենում է Մարիամին. կանայք առաջ են քշում Ոհանին)։

ՈՀԱՆ—Ի՞նչ եք ուզում ինձանից. չեմ ուզում, վոր կնիկս քաղաք գնա, պրծավ գնաց։ Կնիկը իմը չի՞, ինչ ուզում եմ, են էլ կանեմ։

ՆԱԽԱԳԱՀ—Ոհան, մի՞ տաքանա։ Մի մոռանա, վոր հին ժամանակներն անցան. էլ հին իրավունքները չունես։ Քանի վոր բոլորն ուզում են՝ Սոնան գնա, նայել պիտի գնա, իսկ յեթե դու չթողնես նրան, քեզ հետ ուրիշ կերպ կը խոսենք, հասկացար։

ՈՀԱՆ—Վոր ասի չեմ թողնի, չեմ թողնի։ Ապա թող ինձ չլսի էլ ինչի՞ մարդն եմ. ինձ զուր միք վախեցնի։

ՍՈՆԱ—Իսկ յես ասում եմ, վոր պիտի գնամ ու կը գնամ, ինձ ընտրել են, յես իրավունք չունեմ չգնալու։ Թե ինձ ուժով պահեն, քույրիկներ, դուք ինձ ընտրել եք, դուք էլ ինձ պետք է պաշտպանեք։

ՁԱՅՆԵՐ—«Ճիշտ է»։ «Մի վախի»։ «Չենք թողնի, վոր քեզ նեղացնեն»։ «Դու հանգիստ ճամբիդ պատրաստությունը տես»։ Ծերերը՝ «Գժվել են ես հարսները»։ «Սրանց մի լավ խրատել է պետք»։ «Մի տես, մի տես, գեսինը մոռացնելը վոնց են լեզուները յերկարացրել»։

ՆԱԽԱԳԱՀ—Մարիամն ու Սոնան ընտրված են պատգամավոր, վոչ վոք իրավունք չունի նրանց չթողնի վոր գնան. արգելողները կը պատժվեն։

ՄԱՐԻԱՄ—Ժողովը վերջացավ. հիմի կարող եք տուն գնալ։

ՀՐԱՀԱՆԳԻՉ—Ամսի 8-ին կը սպասենք ձեր պատգամավորներին։ Դեհ, ցտեսություն, շուտով ելի կը գամ ձեզ մոտ։

ՁԱՅՆԵՐ—«Գնաս բարով»։ «Շուտ-շուտ արի»։ «Հետդ գրքեր բեր»։ (Կամաց-կամաց ըղորը ցրվում են. մնում են Մարիամը, Սոնան, հրահանգիչը յեվ քարտուղարը։

ՍՈՆԱ—Վոնց տուն գնամ, հիսի հոգիս կը հանեն։

ՄԱՐԻԱՄ—Մի վախի, յես էլ հետդ կը գամ ու ձերոնց հետ կը խոսեմ։ (Դուրս են գնում)։

ԲԱՐՏՈՒՂԱՐ—Այ քեզ հրաշք. յերեկվա տգետ գեղջկուհին այսոր ձգտում է դեպի լույսը, դեպի գիտությունն ու դեպի նոր կյանքը։

ՀՐԱՀԱՆԳԻՉ—Իսկ մեր պարտականությունն է այդպիսիներից պատրաստել գիտակից գործիչներ, վորոնք կը-կառուցանեն մեր նոր կյանքը։ (Խոսելով հեռանում են)։

Վ Ա Ր Ա Գ Ո Ի Յ Ր

ՊԱՏԿԵՐ ՅԵՐՐՈՐԴ

Բեմը ներկայացնում է գավառական գործկոմի առջևի հրապարակը։ Բեմի յետևից լսվում է յերաժշտության ձայն, վորը կոմացկը։ Բեմի յետևից լսվում է յերաժշտության ձայն, վորը կոմացկը։ Կոմացի մոտենում և. հրապարակում վազվզում են յերեխաները, բղավելով «գալիս են, գալիս»։ Շարք-շարք մտնում են կանայք կարմիր դրոշակներով և որքեստրով։ Կանանց մեջ են՝ Սոնան, Մարիամը, կինբաժնի հրահանգիչը, Պետրոսը. բոլորը կանգնում են։ Գործկոմի նախագահը դիմում է աշխատավորուհիներին։

ՆԱԽԱԳԱՀ—Ընկերներ, շնորհավորում եմ ձեր կարմիր առնը. ահա յերեք տարի յե, ինչ Անդրկովկասի աշխատավորուհիներն այսոր ազատ դուրս են գալիս փողոց. գվարթ ծածանվում են նրանց կարմիր դրոշակները և ուրախ բաբախում են նրանց սրտերը։ Ո՞վ ոգնեց կանանց։ Ո՞վ տրվեց նրանց այդ ազատությունը։ Խորհրդային իշխանությունը։ Բանվորները և գյուղացիները խլեցին իշխանությունը թագավորի, կալվածատերերի և բուրժուաների ձեռից. քանդեցին հին կարգերը և նրանց ավերակների վրա կառուցանում են կոմունիզմի հրաշալի շենքը։ Խորհրդային իշխանությունը վոտնահարեց սեռերի անհավասարության անարգ որենքները, վորոնց շնորհիվ կանայք յենթարկվում էին տղամարդկանց, չէին կարող ապրել իրենց ուզածի պես, հնարավորություն չունեին առաջադիմել ու զարգանալ։ Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ դուք, Անդրկովկասի աշխատավորուհիներ, առաջ եք գնում, սովորում եք կարդալ ու գրել, հաճախում եք ժողովներ. ձեզանից շատերն արդեն Խորհուրդներում աշխատում են իրենց ամուսինների ու յեղբայրների հետ ձեռքի ձեռքի տված։

Ուրեմն առաջ, աշխատավորուհիներ, այս վսեմ ճանապարհով։ Մի վախենաք այն դժվարություններից, որ կան ձեր առջև։ Գնացեք համարձակ առաջ, ուր ձեզ և ձեր յերեխաներին սպասում է յերջանկությունը. քայլեցեք անվեհեր դեպի կոմմունիզմը։ Բարձր պահեք ձեր կարմիր դրոշակները, թող բոլորը տեսնեն ձեր ուրախությունը։ Ձեզ հետ տարեք և նրանց, որոնք մինչև հիմա դեռ տանջվում են կապիտալի և հին կարգերի ճիրաններում։

Կեցցե՛, ուրեմն, մարտի 8-ը, բանվորուհու և գեղջկուհու որը։

Կեցցե՛ աղատագրված կինը։

ԲՈԼՈՐԸ—Կեցցե՛, կեցցե՛։

ԲԱՆՎՈՐՈՒՀԻ (առաջ գալով)—Վողջույն ձեզ, քույրիկ։ Այսոր դուք յեկաք մեր տունին և դրանով ցույց տվիք բոլորին, որ քաղաքի և գյուղի աշխատավորուհիները խիտ շարքերով, միասին գնում են դեպի իրենց վերջնական նպատակը—դեպի իրենց լիակատար ազատագրումն։ Ճիշտ է, հիմա մենք ազատ ենք, վոչ վոք մեզ չի խանգարում ապրել այնպես, ինչպես ուզում ենք, բայց միթե հիմա մենք բոլորովին ազատ ենք. ապա ընտանիքի ծանր հոգսը, լվացքը, ճաշը, յերեխաները։ Յերբ կը փոխվի մեր կյանքը, յերբ կազատվենք այս ծանր հոգսերից։ Միայն այն ժամանակ, յերբ կունենանք ընդհանուր ճաշարաններ, լվացքատներ, մանկատներ՝ բոլոր յերեխաների համար։ Այն ժամանակ մենք ել, բոլորովին ազատ լինելով, ամեն կերպ կաշխատենք առաջ գնալ և հասնել մեր ամուսիններին ու յեղբայրներին։ Այն ժամանակ մենք իսկապես կը հավասարվենք նրանց։ Այս պատճառով այսոր մեր դրոշակի վրա գրել ենք՝ «Մեր փրկությունը նոր կյանքի մեջ է»։ Ինչպե՞ս հասնենք այս ամենին։ Ահա թե ինչպես. բոլոր այստեղ հավաքվածներս յեկեք խոստանանք, որ գործ կը դնենք ամեն ջանք՝ քանդելու մեր վոտների կապանքները, որոնք միշտ խանգարել են մեզ առաջ ընթանալ։ Յեկեք

ընդհանուր ուժերով կերտենք նոր կենցաղ, յեկեք մենք ինքներս դարբնենք մեր վիճակը և ինքներս հարթենք մեր նոր կյանքի ուղին։

Կեցցե՛ նոր կենցաղը, որը տանելու յե մեզ դեպի կատարյալ ազատագրումն։

ԲՈԼՈՐԸ—Կեցցե՛, կեցցե՛։

ԲԱՆՎՈՐՈՒՀԻ—Հիմա բոլորիդ խնդրում ենք ներկա գտնվել մեր հանդիսավոր նիստին. համեցեք դահլիճ։

(Ճառի ժամանակ հավաքվում են քաղաքացիներ, յերեխաներ. միլիցիոները յեկա և քշում՝ ամբոխին. Ճառից հետո որքեստրը նվագում և. կանայք շարք-շարք ներս են մտնում։ Պետրոսը կանգնեցնում է Սոնային)։

ՊԵՏՐՈՍ—Տես, չվախենաս. դու ասելիքդ հո լավ գիտես։

ՍՈՆԱ—Ախ, Պետրոս, վախենում եմ։ Ես ինչքան ժողովուրդ կա, շունչս կտրվում է, գլխումս ամեն բան խառնվել. է. գիտցածս ել մոռացա։

ՊԵՏՐՈՍ—Մի՛ վախի. բան չկա. հենց վոր սկսես, վախը կանցնի։ Յես ել առաջ վախում եյի, վոտներս դողում եյին, կարծում եյի վոչինչ չեմ կարողանա ասել. բայց հենց վոր բերանս բացի, վախս բոլորովին մոռացա. ինքդ ել կը տեսնես, վոր խոսելը իսկի դժվար բան չի։

ՍՈՆԱ—Հա՛, քեզ համար հեշտ է։ Դու ամեն բան գիտես, իսկ յես դեռ կարգին կարդալ ել չեմ իմանում։

ՊԵՏՐՈՍ—Բան չկա, շուտով ամեն բան կը սովորես, դու շատ սրտանց ես ուզում սովորել։

ՍՈՆԱ—Հա, Պետրոս, շատ եմ ուզում, համա տանը ինքան գործ ունեմ, իսկի սովորելու ժամանակ չի մնում։

ՊԵՏՐՈՍ—Սոնա, ետ բանի մասին հետո կը խոսենք. հիմի շտապիր, թե չե կուշանաս։ Ա՛յ, չվախենաս, Սոնա։

11-52 ակ

ՍՈՆԱ.—Վայ, վայ, վայ, ինչ պիտի լինի իմ բանը։ (Ներս և մտնում)։

ՊԵՏՐՈՍ—Ինչ լավ է Սոնան. ինչ լավ կլինեք մի այդպիսի ընկեր ունենալ, միասին սովորել, միասին աշխատել, միասին կառուցանել նոր և լավ կյանքը. Էհ։ (Դանդաղ գնում և դեպի դուռը)։

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ՊԱՏԿԵՐ ՉՈՐՐՈՐԴ

Յերրորդ և չորրորդ պատկերների միջև անցնում է 2 ամիս։ Բեմը առաջին պատկերի սենյակն է։ Սոնան ինչ վոր թղթեր է ջոկում. մայրը խմոր է հունցում։

ՏԵՍԻԼ Ա.

ՄԱՅՐ ՅԵՎ ՍՈՆԱ

ՄԱՅՐ (նայում է Սոնային յեվ գլուխը շարժում)—Ելի դու եդ թղթերից ձեռք չես քաշում։ Լվացքը սկսի. տես ինչքան շոր է վերածած։

ՍՈՆԱ.—Մայրիկ, եսոր չեմ կարող, եգուց, եսոր շատ բան ունեմ.

ՄԱՅՐ—Գիտեմ քո եգուցը, առաջին անգամը չե, վոր լսում եմ։ Ոհանի շալվարը կարկատեցիր։ Ելի յես պիտի աչքերս քոռացնեմ։ Սաղ որը վոտի վրա յեմ, հոգիս բերանս է հասել։ Հենց իմացա, վոր հարս բերեմ, ինձ ոգնական պիտի լինի. ամա դու ինձ ինչ ոգնական ես, հարսը քեզ պես կը լինի։ (Լաց է լինում)։

ՍՈՆԱ (խոսում է ինքն իրեն)—Ախը ինչ անեմ։ Ես ինչ դժբախտություն է, ամեն որ ես է իմ հալը։ Մեկ սա յե հոգիս հանում, մեկ հայրը։ Ոհանը խոմ իսկի ինձ հանգիստ չի տալի. գահլաս տարավ ետ մարդը. «ուր ես գնում», «ինչու ես գնում»։ Ատված, յերբը կազատվեմ ես ցավերից։ Հրահանգիչն ասում եր, վոր քաղաքում տատմերների ուսումնարան է բացված, ասում է՝ արի քեզ ել կը տեղավորեմ։ Շատ եմ ուզում գնամ. մեր գեղում ես ինչքան կնիկ է մեռնում, վոչ ակուշերկա ու-

նենք, վոչ էլ բժիշկ։ Յերանի շատով գնամ. ես կյանք է, վոր ապրում եմ։ Ինքս իմ գլուխը կը պահեմ ու ուզածիս պես էլ կապրեմ։

ՏԵՍԻԼ Բ.

ՆՐԱՆՔ ՅԵՎ ԱՌԱՋԻՆ ԳԵՂՋԿՈՒՀԻՆ

ԱՌԱՋԻՆ ԳԵՂՋԿՈՒՀԻ (ներս է մտնում յերեխան ձեռին)—Մեկ ասա, ինչ անեմ եղ անիծվածին։ Վրաս ընկավ, ասես կատաղած շուն լիներ. ասում է. «Վայ թե տեղ ես գնացել, սաղ Ջանդ կը ջարդեմ»։ Սոնա Ջան, ինչ անեմ, ախր եսոր վարժուհին խարար է արել, թե յեկեք, մեր կառավարության մասին պիտի խոսեմ։

ՍՈՆԱ.—Դու գնա, Մագթաղ, դելեգատ ես, իրավունք չունես չգնալու։ Բո մարդու հետ յես կը խոսեմ։ Մի քանի որ ադաջ Արեգի մարդու հետ խոսեցի, հիմա կնկան թողնում է, վախեցել է, էլ բան չի ասում։

ՄԱՅՐ—Ի՞նչ լավ-լավ բաներ ես սովորեցնում։ Աչքս լուս, քեզ խելքից հանեցին, հիմի էլ դու ուրիշներին ես խելքդանն անում։ Տես հյա, մի տես, ասում է «մարդուդ ականջ մի անի»։ Սոնա, չես ամաչում, թու քու նամուսին։

ՏԵՍԻԼ Դ.

ՆՐԱՆՔ ՅԵՎ ՅԵՐԿՐՈՐԴ ԳԵՂՋԿՈՒՀԻՆ

ՅԵՐԿՐՈՐԴ ԳԵՂՋԿՈՒՀԻ (ներս մտնելով)—Բարի որ, բարի աջողում։ Սոնա Ջան, մեկ խնդիր գրես, վոր ինձ նալոգից ազատեն։ Դու հո գիտես, թե ինչ որի եմ յերեխանցս հետ Ստեփանի մեռած որից։ Շնորհակալ եմ, կոմիտեն քիչ ոգնեց, թե չե բոլորս էլ սովից կոտորվելու եյինք։ (Լաց և լինում)։

ՍՈՆԱ.—Մարթա Ջան, մի լա. ամեն բան լավ կը վեր-

ջանա. Նախագահի հետ խոսում եյի նալոգի մասին, ասավ՝ բոլոր վորբևայրիներին կազատենք նալոգից։ Իսկ կոոպերատիվում բուրդ են տալիս մանելու, ասել եմ, վոր քեզ էլ տան, կը տանես կը մանես ու մի կերպ յոլա կը գնաս։

ՅԵՐԿՐՈՐԴ ԳԵՂՋԿՈՒՀԻ (ուզում է Սոնայի ձեռքը համբուրի, նա չի թողնում)—Սոնա Ջան, ասված քեզ միշտ սաղ պահի, շատ շնորհակալ եմ։

ՍՈՆԱ.—Ինչու՞ ես շնորհակալ լինում, ես բոլորը Խորհրդային իշխանությունն է անում. նա ուզում է բոլոր խեղճերի դրությունը լավացնել։

ՏԵՍԻԼ Դ.

ՆՐԱՆՔ ՅԵՎ ՅԵՐՐՈՐԴ ԳԵՂՋԿՈՒՀԻ

ՅԵՐՐՈՐԴ ԳԵՂՋԿՈՒՀԻ (ներս մտնելով)—Սոնա Ջան, ուրախությունից քեզ մոտ յեկա։ Ոնիկիս արդեն ուսումնարան ընդունեցին, ասին եգուց արի, գիրք էլ կը տանք։

ՍՈՆԱ.—Ի՞նչ լավ յեղավ։ Հիմի. Կատար, դու քո մարդուն համոզիր, վոր դպրոցի համար մի քիչ աշխատի, յերեխեքը մեղք են։ Կառուրը կաթում է, հատակն էլ է փչացել. ասա իրան՝ թող մի քիչ բանի։

ՏԵՍԻԼ Ե.

ՆՐԱՆՔ ՅԵՎ ՄԻ ԱՂՋԻԿ

ՄԻ ԱՂՋԻԿ (լալով ներս և վազում)—Մերս շատ ծանր հիվանդ է. ասավ՝ «Գնա Սոնային կանչի, մեռնում եմ»։ (Լաց է լինում)։

ՍՈՆԱ (հուզված)—Մի լա, Արուս Ջան, ես է՝ կը գամ։ Խեղճ կին, տատմերը նրան փչացրեց, յերեխա բերելուց հետո՝ էլ չի լավանում։ (Շալը փաթաթում է, վոր դուրս գնա։ Ներս է մտնում Ոհանը)։

ՏԵՍԻԼ Զ.

ՆՐԱՆՔ ՅԵՎ ՈՀԱՆ

ՈՀԱՆ—Եա՛ ուր ելի։

ՍՈՆԱ.—Հարևանը շատ հիվանդ է, կանչել է ինձ, գընում եմ տեսնեմ։

ՈՀԱՆ (չթողնելով նրան)—Աղջի, եա՛ քո գժությունները թող։ (Շուրջը նայելով)։ Ես ի՞նչ բաղար եմ եստեղ սարքել։ Չեմ ասել, վոր իմ տունը մարդ պիտի չգա։ Ես տան տերը յես եմ ու չեմ թողնի։ (Գեղջկուհիներին)։ Դե՛, փասա-փուսեքդ հավաքեք, ել ձեզ եստեղ չտեսնեմ, անամոթներ։ (Կանայք շտապ հեռանում են)։

ՏԵՍԻԼ Ե.

ՄԱՅՐ, ՍՈՆԱ, ՈՀԱՆ

ՄԱՅՐ—Ապրես, վորդի, ապրես, դադար չունեմ եա՛ անասունների։

ՍՈՆԱ.—Մի բղավի։ Յես կինբաժնի կազմակերպիչն եմ, կանայք ինձ մոտ միշտ ել պիտի գան, իրավունք չունես չթողնելու։ Իսկ յերբ չթողնես, են ժամանակ այստեղից կըգնամ ու ել յես չեմ գա։ Ել ուժ չունեմ համբերելու։ Քո մի կտոր հացը այ բողազումս է մնացել։ Չե՛, յես չեմ կարող խեղճերին չոգնել, լսում ես։ Ավելի լավ է գնամ, իմ մի կտոր հացը յես ինքս վաստակեմ, իմ ուզածի պես ել ապրեմ ու սովորեմ։ Զահլաս գնաց։

ՈՀԱՆ—Ինչ ասի՞ր. ուզում ես գնա՞ս։ Տեսա՞ր, ինչ է ուզում անի։ Ուզում ես անունս սաղ գեղում խայտառակե՞ս. ուզում ես, վոր բոլորը ծիծաղեն վրա։ Ապա մի գնա, սաղ չեմ թողնի քեզ։

ՍՈՆԱ.—Չե՛, յես ել չեմ մնա այստեղ, չեմ կարող։ Ավելի լավ է մեռնեմ։ (Վազում է դեպի դուռը)։

ՈՀԱՆ Ա՛յ յես քեզ... (Բարձրացնում է ձեռը, վոր խփի)։

ՍՈՆԱ. (Ոհանին յետ հրելով)—Իրավունք չունես։ Իմ վորը ես տանը չի լինի։ (Գնում է)։

ՈՀԱՆ (ընկնում է աթոռի վրա ու գլուխը ձեռներով սեղմում)։

ՄԱՅՐԸ—Յերկնայի՛ն թագավոր։ (Ցերեսը խաչակնքում է)։ Անիծվածը բոլորիս խայտառակեց։ Հիմի ի՞նչ յերեսով մարդկանց աչքին յերևամ։ Տեր աստված, տեր աստված, ինչո՞ւ մեզանից յերես դարձրիր։ (Լաց է լինում)։

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ՊԱՏԿԵՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Զորրորդ պատկերից հետո անցնում է 8 ամիս։ Գործողությունը կատարվում է Պետրոսի սենյակում։ Պետրոսը հիմա քաղաքում բանֆակի ուսանող է։

ՏԵՍԻԼ Ա.

Ներս է մտնում Սոնան գրքերը կռան տակ։

ՍՈՆԱ—Ահա և յես։ Բարև, Պետրոս, լավ ես։ Ինչքան նորություններ պիտի պատմեմ քեզ։ Թող վոր մի քիչ հանգստանամ, շատ եմ հոգնել։ Ել ուր ասես, վոր չեմ գնացել. դասախոսության, կինբաժին և մինչև իսկ մանկատուն եմ մտել։ (*Հանում է վերարկուն ու նստում*)։ Պետրոս, գրքերդ թող, մի քիչ խոսենք։

ՊԵՏՐՈՍ—Սոնա, յերեքշաբթի, ախր, քննություն ունեմ, մոռացել ես։

ՍՈՆԱ—Վոչինչ, կը հասցնես, մի վախենա, մինչև յերեքշաբթի դեռ յերեք որ ել կա։ Դե, Պետրոս, լսիր։ Յերեկ գիշեր մեր պատգամավորուհիները փողոցներում հավաքել եյին անտեր յերեխաներին։ Սարսափելի բաներ են պատմում։ Վորպեսզի ցրտից չսառեն, խեղճերը իրար գլխի յեն հավաքվում փոսերում կամ դռների առջև, աշխատում են ինչքան կարելի յե իրար մոտ լինել, վորպեսզի դռնե այդպիսով մի քիչ տաքանան։ Պետրոս, յեթե տեսնեյիր նրանց. պատառոտած, վտիտ, համարյա բոլորն ել հիվանդ։ Այսոր խեղճերին բաղանիք եյին տարել, իսկ հիմա արդեն մանկատանն են։

ՊԵՏՐՈՍ—Սոնա, յես քեզ միշտ ասում եյի, վոր չպետք

է վհատել։ Քանի վոր մեր պետությունը չի կարող յերեխաների ամբողջ հոգսը իր վրա վերցնել, մենք բոլորս պարտավոր ենք ամեն կերպ աշխատել այդ ուղղությամբ և վոչ մի դժվարության առաջ չպիտի կանգնենք։ Չե՞ վոր այդ մանկատունն ամբողջապես միայն ձեր աշխատանքով է հիմնվել. փող հավաքեցիք, կտորներ ստացաք, ինքներդ կարեցիք և հագցրիք յերեխաներին և այդպիսով ահագին գործ կատարեցիք։

ՍՈՆԱ—Մի տեսնես մեր պատգամավորներն ինչպես ուրախ են. և իսկապես չե՞ վոր ամբողջ աշխատանքը նրանց գործն է։ Մերոնք կինբաժնում այնքան եյին զոգևորվել, վոր ուզում եյին մարտի 8-ին մեր գյուղում ծննդականների համար տուն բանալ. առաջարկեցի մի քիչ սպասեն, մինչև կավարտեմ մեր դասընթացները և կը գնամ գյուղում աշխատելու։ Հիմա բանալու յենք արհեստանոց անգործ կանանց համար։ Դու գիտես, թե վորքան անգործ կանայք կան։ Ամեն որ տասնյակներով գալիս են կինբաժին, աշխատանք են ուզում։ Այդքան շատ է ցանկացողների թիվը, վորտեղից այդքան գործ գտնենք։

ՊԵՏՐՈՍ—Այ արհեստանոցի մասին շատ լավ եք մտածել, շատ լավ բան է։ Գիտե՞ս վերջերս ինչպես շատացել է պոռնիկների թիվը։ Գիշերները փողոցով անցնելն անհնար է, աչքիդ առաջ կատարվում է կենդանի ապրանքի վաճառքը։ Կապիտալիզմի այդ սոսկալի ժառանգությունը վորքան կյանքեր է փչացրել։ Այս ցավալի յերևույթի վրա հարկավոր է լուրջ ուշադրություն դարձնել։ Սոնա, յերևի արդեն կարդացած կը լինես, վոր Մոսկվայում կինբաժինը լուրջ ուշադրություն է դարձնում այս ցավալի յերևույթի վրա։

ՍՈՆԱ—Այո, կարդացել եմ, Պետրոս։ Մեզ մոտ ել մոտ որերս այդ հարցի առթիվ խորհրդակցություն է նշանակված։ Ախր, Պետրոս, մեր ամենամեծ դժբախտությունը տգիտությունն է, այդ պատճառով ել գործարան-

ներում ամենից առաջ կանանց են կրճատում։ Իմ կարծիքով առաջի հերթին պետք է դպրոցներ բանալ և կանանց զանազան արհեստներ սովորեցնել։ (Դուռը թակում են)։

ՊԵՏՐՈՍ—Մտեք։ (Վեր և կենում)։

ՏԵՍԻԼ Ը.

Ներս և մտնում Վարդանը։

ՍՈՆԱ—Ա՛, Վարդան, բարև, բարև։ (Սեղմում է ձեռը)։

ՎԱՐԴԱՆ—Բարև ձեզ, ընկերներ։ (Ձեռ է տալիս)։ Դե, սաա, յեղբայր, վոնց ես։ Ելի գրքերով ես շրջապատված։ Ցեա՝ ել բան չեմ հասկանում, գլուխս ուռել է։ Հեշտ բան հո չի։ Ամբողջ մի շաբաթ անգիր ելի անում։ Գիտեք ինչ. հենց վոր քննությունները վերջացնենք, յեկեք մի լավ քեֆ սարքենք։ Ի՞նչ եք կարծում, լավ չի լինի. աղջիկս ել կը մկրտենք։

ՊԵՏՐՈՍ—Հա, Վարդան, շատ լավ ես մտածել։ Ճիշտն սասա, յես ել շատ եմ հոգնել։ Ես յերկու շաբաթվա ընթացքում քննությունների պատճառով լավ չարչարվեցինք։ Դե ուրեմն կեցցե՛ նոր կենցաղը։ Ցեկեք հրավիրենք կոմբինատի բոլոր անդամներին։ Իվանովն ել, կարծեմ, տղա ունի, յերկուսին ել կնքենք։ Վարդան, քո աղջկա անունը կը դնենք Ռոզա, Կարմիր Ռոզա Լյուկսենբուրգի անունով, իսկ նրա տղայի անունը՝ Կարլ, Կարլ Լիբկնեխտի հիշատակին։ Սոնա, ինչ ես կարծում, լավ չի լինի։

ՍՈՆԱ—Չե՛, ընկերներ. տեսեք ինչ եմ առաջարկում։ Դուք գիտեք, վոր շուտով աշխատավորուհիների միջազգային օրն է լինելու՝ մարտի 8-ը։ Ցեկեք փոքրիկներին այդոր հանդիսավոր նիստի ժամանակ կնքենք. բոլոր ներկա յեղողներն ել նրանց կնքամայրերը կը լինեն։

ՎԱՐԴԱՆ ՅԵՎ ՊԵՏՐՈՍ (Միասին)—Կեցցե՛ Սոնան, կեցցե՛. ինչ լավ մտածեց։

ՍՈՆԱ—Այդ տոնի առթիվ ել մեկին կանվանենք Մարտա, մյուսին՝ Մարտին։

ՎԱՐԴԱՆ—Շատ լավ, թող այդպես լինի։ Սոնա, գիտես թե կինս վորքան կուրախանա։ Աղջիկս քանի՛ մայրեր կունենա։ Ա՛յ թե ինչ զոչաղ աղջիկ պիտի մեծացնեք։ Դե, դուք, կանայքդ, քաջ ժողովուրդ եք։ Ազատության հոտ առաք թե չե, սկսեցիք առաջ ընթանալ, խորտակելով ձեր ճամբին բոլոր արգելքները։

ՍՈՆԱ—Անկասկած, բավական է, վորքան ճնշեցին մեզ։ Ձեր յերեխային մենք այնպես կը դաստիարակենք, վոր վոչ վոք չկարողանա վիրավորել նրան։ Դեհ, նրա ժամանակն ել ուրիշ ժամանակ կը լինի. կանայք իսկապես տղամարդկանց հավասար կը լինեն և մեր կրած տանջանքները յերբեք չեն կրի։

ՊԵՏՐՈՍ—Կեցցե՛ մեր Սոնան։ Ճիշտ է, դու հեշտությամբ չստացար քո ազատությունը։ Բայց վոչինչ. չե՞ վոր դուք ապագայի նոր կանանց առաջին ծիծեռնակները, առաջին ավետաբերներն եք։ (Բարձրացնելով ջրով լի ըաժակը)։ Ուրեմն կեցցե՛ նոր կինը, վոր կերտում է լավագույն կյանքը։ Կեցցե՛։

ՎԱՐԴԱՆ (Ծափահարելով)—Սոնա, հանձին ձեր վողջունում ենք այն անվախ քաջերին, վորոնք չնայելով բազմաթիվ դժվարություններին, թողին հին, փտած կյանքը և բռնեցին լայն և լուսավոր ճանապարհը։ Ձեր թիվը դեռ մեծ չե, բայց շուտով կը հետևեն ձեզ շատ շատերը, վորովհետև Կարմիր Աստղի փայլը կը բանա նրանց աչքերը և ընկճված թշվառները կը զգան արթնացող նոր կյանքի թարմ շունչը։

ՍՈՆԱ—Այո, որեցոր մեր շարքերը խտանում են, բայց շրջապատը դեռ շատ մութն է. հին նախապաշարումները կանանց վերաբերմամբ դեռ շատ խորն են նստած մարդկանց մեջ։ Հարկավոր է տոկուն աշխատանք, վորպեսզի փարատվի այդ խավարը։ Դուք, կոմմունիստ-

ներդ, զարտավոր եք ոգնել կանանց. կռվեցեք այդ նախապաշարմունքների դեմ և սովորեցրեք տղամարդուն նայելու կնոջ վրա իբրև հավասար ընկերոջ։

ՊԵՏՐՈՍ—Ազնիվ խոսք ենք տալիս միշտ կատարելու քո այդ պատվերը։

ՎԱՐԴԱՆ (*մեկնելով ձեռքը*)—Ցերդվում եմ, Սոնա, վոր յես միշտ կանանց հավասարիմ պաշտպանը կը լինեմ։

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

ՊԱՏԿԵՐ ՎԵՑԵՐՈՐԴ

Բեմի վրա սեղան, վորի շուրջը նստած է մարտի 8-ի առթիվ կայացած հանդիսավոր նիստի նախագահությունը։ Նստած են կինբաժնի վարիչը, Սոնան, հրահանգիչը, գավառ. գործկոմի նախագահը, Պետրոսը, 3 բանվորուհի և յերեք գեղջկուհի։

ՎԱՐԻՉ—Ընկերներ, ընկեր Սոնան ուզում է մի առաջարկություն անել։ (*Ձայներ. «Խնդրում ենք, խնդրում ենք»*)։ Խոսքը պատկանում է ընկ. Սոնային։

ՍՈՆԱ.—Ընկերներ, յես առաջարկում եմ մեր այսորվա հանդիսավոր նիստը փակենք յերկու նորածին մանուկների կնունքով։

ՁԱՅՆԵՐ—«Համաձայն ենք, համաձայն»։ «Շատ լավ եք մտածել»։ (*Բեմ են բարձրանում Վարդանը, Իվանովը իրենց կանանց յեվ յերեխաների հետ։*

ՍՈՆԱ.—Ընկերներ, Խորհրդային իշխանությունը միշտ առանձին սիրով և խնամքով է վերաբերվել դեպի մեր յերեխաները, բացել է մանկատներ, դպրոցներ, մանկապարտեզներ. վորքան փոքրիկներ են տեղավորված այդ հիմնարկություններում։ Յեվ վորքան վոր բանվորա-գյուղացիական կառավարությունն ուժեղանա և հարստանա, այնքան նրա խնամքը դեպի մատաղ սերունդը կավելանա։ Ինչու մեր կառավարությունը այդպես հոգում է յերեխաների մասին։ Վորովհետև ամեն մի քաղաքացի թանգ է բանվորական կառավարության համար և դրա համար էլ նա աշխատում է պատրաստել, վորքան կարելի յե շատ, առողջ, ազնիվ, քաջ ու գիտակից քաղաքացիներ։ Մեզ այդպիսի մարդիկ են հարկավոր, վորպեսզի կարողանանք

կոմմունիզմի հրաշալի շենքը կառուցել. ամեն մի անհատ հասարակության համար կարևոր անդամ պիտի լինի։ Յերեխաները մեր կյանքի ծաղիկներն են։ Մեր հույսն ու հավատը։ Այս փոքրիկները մեր սոցիալիստական հայրենիքի ապագա քաղաքացիներն են։ Սրանք, շրջապատված ընդհանուրիս սիրով ու խնամքով, պիտի արժանի լինեն շարունակելու մեր մեծ ուսուցիչ ու առաջնորդ ընկեր Լենինի գործը։ Սրանց ձեռքերով պիտի վոչնչանա չարի թագավորությունը։ Ընկերներ, այս յերկու փոքրիկները կը լինեն մարտի 8-ի զավակները, իսկ մենք բոլորս կը լինենք սրանց մայրերը։ Առաջարկում եմ աղջկանը Մարտա անվանել, իսկ տղային մեր յերկու մեծ ուսուցիչների Մարքսի և Լենինի հիշատակին—Մարտին։

ՎԱՐԻՋ—Ով համաձայն է, թող ձեռքը բարձրացնի։ *(Բոլորը բարձրացնում են)։* Խոսքը պատկանում է ընկեր Վարդանին։

ՎԱՐԴԱՆ—Մենք, այս յերեխաների ծնողները, մեր փոքրիկներին հանձնում ենք ձեր հոգատարությանը։ Սովորեցրեք մեր յերեխաներին ատել չարն ու վատը, ամբացրեք նրանց կամքը և պատրաստեցեք նրանցից լավ գործիչներ մեր փայլուն ապագայի համար։ Թող նրանք աշխարհիս յերեսից մաքրեն ամեն մի կեղտ և կառուցեն կոմմունիզմի անմահ շենքը։ Կեցցեն նոր սերնդի ներկայացուցիչ Մարտան և Մարտինը՝ մեր թշնամիներին սարսափեցնելու և մեր ուրախության համար։ Կեցցե կոմմունիզմը։

ԲՈԼՈՐԸ—Կեցցե, կեցցե։

ՎԱՐԻՋ—Քաղաքի և գյուղի աշխատավորուհիներ, փակելով մեր հանդիսավոր նիստը՝ ցանկանում եմ ույժ և յեռանդ ձեր ապագա աշխատանքների համար։ Սեղմեցեք ձեր շարքերը, վորովհետև ույժը միության մեջ է։ Աշխատեցեք, սովորեցեք և գնացեք միշտ առաջ, իսկ մենք կոգնենք ձեզ։ Կեցցե մարտի 8-ը, վորը մեզ ավելի մոտեցրեց և ույժ տվեց մեր հետագա աշխատանքների համար։

ՄԻ ԳԵՂՋԿՈՒՀԻ—Քույրիկ, մի բան ասեմ։

ԲՈԼՈՐԸ—Ասա, ասա։

ԳԵՂՋԿՈՒՀԻՆ—Քույրիկներ, մեր բոլոր գյուղացի պատգամավորների կողմից յես շնորհակալություն եմ հայտնում այն բոլորի համար, ինչ վոր այստեղ տեսանք ու լսեցինք։ Բոլորը կը պատմենք մեր քույրերին ու նրանց հետ միասին կաշխատենք փոխել մեր կյանքը այնպես, ինչպես վոր դուք սովորեցրիք մեզ։

ԲՈԼՈՐԸ—Կեցցե, կեցցե։

ՎԱՐԻՋ—Նիստը հայտարարում եմ փակված։ Խընդրում եմ վոտի կանգնել։ *(Ոքնեատրը նվագում է Ինտերնացիոնալ։ Կանայք յերգում են)։*

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ «ՄԱՐՏԱԿՈՉ»

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Կովալենկո — «Քաղաքական գրագիտություն», գինն է . . . . . 25 կ.
2. Ս. Կասյան — «Հայաստանի տնտեսական - դասակարգային ստրուկտուրան», գինն է . . 15 կ.
3. Ալ. Մարտունի.—«Հովհ. Թումանյանի ստեղծագործության սոցիալական արժեքը», գ. է . 15 կ.
4. Հովհ. Քաջազնունի — «Հ. Հ. Դաշնակցությունն անելիք չունի այլևս», գինն է. . . 75 կ.
5. Դեպի նոր կյանք—պիես . . . . .

ՏՊԱԳՐՎՈՒՄ ԵՆ

6. Կարմիր ռազմիկի հուշատետրը։
7. Լիլինա.—Կոմմունիստական ընտանիքից դեպի կոմ. հասարակություն։
8. Լենին (ժողովածու)։.

Դիմել՝

Издательство „Мартакоч“.
Тифлис, ул. Троцкого № 6.

Главлит № 1116. Тираж 1000.

500

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0501414